

էջ. տող.

էջ. տող.

ձեռ.

Ցազագ թէ ոչ զո՞ն յաւերժաւ-

Հարուսնը

86 5 ցան գծանման նրբագոյն	97 2 ցան գծանման նրբագոյն է ցան զկէսն նրբագոյն (յիշ զծանուն)
13 աւերահարսից ննունդը	7 համբարուսաց մնունդը
87 7 կերպարանից այլ և այլս	25 կերպարանի կերպարանն
11 ըստ կարծեաց նոցա	98 5 ըստ կերծեաց նոցա
13 զան համբարուս և զո՞ն աւեր-	8 իշ և զո՞ն համբարուս
ժմհարս	նոյնուն յիշ և զո՞ն համբարու-
88 4 ի բանահեծիցն զո՞հալթ	26 գրանցանանց
16 զո՞ր արաւէչն կուն	99 16 զո՞ր արաւէչն կուն
20 պնդից յերացն վերայ	21 պնդին ի բանիցն մերայ

Համաձայն են նախնական ընթերցումին. որով նորայրի կարծիքը առ այժմ ալ կամայական կը մնա:

Մարիէս¹ այդ խօսքին երկրորդ մասին մէջ է որ սրբագրութիւն մ'ուզած է ներմուծել, այս-ինքն փոխանակ ըսկու «և ու ի կովոց ժովագումն կելաւ» կ'ուզէ ուզել՝ ժովացուս ինչ դրսեաց, թէ ինապէս կովացուրը ծովացու եղած է կ'ուզէ մնկնել շփոթ լսելութենէ մը, և իրու թէ ԺԱ գարէն վերջ Ան Կի առջն՝ որ ց կը ճնշուէր՝ անցեր է և ի հնչման ուսկից ալ առաջ եկած է ծովացուլ:

Համ բաշրջուկ և կամայական կը թուին Մարիէսի ըստեները և իմաստը աւելի կը մթնցնեն: Ագոր² ալ կը զայէ թէ պէտք չկայ այդպիսի փոփոխութեան մը:

(Հարուսնակելի)

Հ. ԵՂԻԱ ՓԵԶԱԿԵԱՆ



ՆԻՒԹԵՐ ՊՈՒԼԿՈ.ՐՈ.ՀՈ.ՅՈՅ ՊՈ.ՏՄՈՒԹԵԱՆ ՀՈ.ՄՈ.Ր

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՇԱԽՈՒԹԵԱՆ

ՖԻԼԻՊԵՒ ՀԱՅՈՒ Ս. ԳԵՐՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ



Օգտակար, շահեկան և կարեւոր վաւերաթուղթ մըն է հետեւեալը զո՞ր արտագրած եմ ֆիլիպէի. Սուրբ Գէորգ եկեղեցույն գիրքերուն մէջ կատարած պըրպատման ընթացքին:

Վաւերաթուղթս մաս կը կազմէ ձեռագիր հատորիկի մը³, և կը խօսի ֆիլիպէի Սուրբ Գէորգ եկեղեցույն վերաշինութեան վրայ:

ՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մըրօն Անելիցինը, որ և Փալմագուածոււս Քալաք Նորոն Կամութեալը, Անոնւ Մըրօն Հէորուս Քալաքարսից Զօրակարն Քրիստոսի:

«Ի Պատիրագութեան սրբոյն Ապահան Տեառն Տեառն

Գարբիէլ Աստուածածեալ և Սրբազն Արք Եպիսկոպոսին:

1. Revue ալ էլ 97 (179).

2. Բազ. 1926, էլ 110.

Եւ ի Պատիրագութեան կոստանդինուագուոյ Տեառն Տեառն կարապետ Աստուածանիթիր և Սրբազն Արք Եպիսկոպոսին Եւ ի յառաջնորդութիւն բաղացին Տեառն Տեառն

Մեսրով Առաքելաշունչ Արք Եպիսկոպոսին:

Յամի Տեառն մէրայ 1828 և ի հայոց ԱՄՀՀ զրեալ ի ֆիլիպպուազօլիս բարենորի բաղացի, ի սեպտեմբերի ամսոյ 25:

Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգև կատարեալը ի վերուստ են իշեալը առ ի հօրէն լուսոյ, Յակոր «Առաք». զլաւ. համար ժեւ:

Վասն որոյ ամենայն ըստ կարի իւրում պարսի ըստանալ հոգեւոր բարիս, զի որպահի է պատճառն, այնպիսի է զործն, հո-

3. Այս Հատորին Ա. մասը հրատարակեցի Բազմացիուն 1925, էլ 258. 1926, էլ 37.

գեւոր բարեաց պատճառ Աստուած է, որ է կեանք յափտենական, ուստի որ ստացեալ ունի զինչ և ից հոգեւոր պարզեւս, ընդ նմին և առ ինքն ունի զկեանքն յափտենական:

Ապա որպէս առաւել է հոգի քան զմարմին նոյնապէս առաւելագոյն են հոգեւոր բարիցն քան զմարթաւորն. Չսա ստանալ պարս է, վասն սմին աշխատիլ հարկաւոր է, և ասկ որոյ զուն գործելի է իրաքանչիւր անձնի կեանս իրեան սիրով և յօժարութեամբ բառնալ փառասիրութիւն և զգգոնութիւն:

Որպէս արդ տեսանի յայս իրականութիւն որ ստորիւ ըստորազրի ի ծանօթութիւն ապագայից եղարց մերոց: Ջի յաւուզ յայսուփէկ. մինչ զլուխ տերութեան էր ի յըզրագմունս զանազան ունելով զպատերազմ ընդ տերութեանն թուսաց և ի նոյն պատահնէր զօրօթ բազմօց յամենայն կարողութեան զիթցեալ յազգս մեր, և հայեցեալ ի բնական հասատարմութիւնս մեր, զոր ունիմը միշտ ուղիղ սրախ ըստ զրոց պատուիրանի, ետ հրովարտակ բարձու հրամանի իւրոյ բարցաւորց պայմանի ի հաճոյս մեր յանձնեալ զկատարութիւնն զիթցեցուց զեկեղեցին ի հիմանց նորոգելով: Որոյ շնորհիւ վասն ի յութից ամաց հետէ ի հետեւման զեգերէաց ի ջանս և ի վաստակս, ի յաղաշանս և ի պազատանս առ Աստուած բայց ոչ էր յաջողեցեալ և լցեալ փափազանաց մերոց զի թէպէտ խնդրուածը ի ծառայից են, այլ կամբ կատարման Արարչին է: Այլ յորժամ եղեւ հաճութիւն ամենաբարույն Աստուածոյ, և համեցաւ ի խնդրուած մեր յայսմ անակնկալ միջոցին ընկալաց զոր ինդրէաց, եկն ի ծեռս մեր որում փափաքէաց վասն որոյ կարողութեամբն Աստուածոյ սկիզբն արարի բարեամբ հայութիւն է կամ առաջ ի հազար երկու հարիւր եօթանաւուն եօթն թուականիս հայու և ի մայիս ամսոյ ը զնախկին հնացեալ սուրբ եկեղեցին ձեռուամբ երկուց ճարտարապեսաց եկեղեց ի Պալոսյ, որոց մին էր Դիերնանցի վարպետ Տօնիկն՝ զլուխ փայտաշէն կերտուածոց, իսկ միւս Պայտուրտցի Յօհաննէսն՝ զլուխ

բարաշէն շնուռւածոց, ի հիմանց ի վեր առնուու և ապա յորդորեցաց զտեղս լայնելով ի չորից կուսի բազմօց աշխատանքը հարդարաւոր և առաւել եւս գործաւորոց մինչ և կարի իմ յարմարաւորս զործել ամսօրեաց աւուրց զբարինս վառօթով պատարելով: Եթես որոյ ըստ կանոնի ըրբազան հանդիսի մեծաւ և հոգեւոր ուրախութեամբ և բարձու շինուածով ըստ արժանուոյն զեղցիկ լուսամուց յարմարաւոր առաստազօց, կամարական խորանօց և ամենայն պատշաճաւոր և հարկաւոր պարագայիւց յաւարտ հասուցեալ ողորմութեամբն Աստուածոյ ի հոկտեմբեր ամսոյ իլ:

Բայց զի արդ և որպէս ընկալաւ եկեղեցիս զձեւակերպութիւն շինուածոյ իրակայնութիւն եզեւ մեծի եկեղեցւոյ իրը թջ կանգնոյ բաց ի գալթէ և ի միջոյ խորանէ: և լայնութիւն ի մի կանքնոյ, իսկ բարձրութիւն ի յինն և կիսոյ և դիրց աւագ խորանին վայելուշ յոյժ. բարձրութեամբ ի է կանգնոյ և լայնութեամբն ի հինգ կանգնոյ ունելով զայլ եւս յերկուց կուսէ խորանս փողբիկս ըստ տանելոյն, և յասուկ մեծի ի խորանիս հանդերձ բեմիւ, համակ մարմարիոնեայ քարանց յօրինեալ և լուսամուտը հինգ ի միոյ կողմանէ եկեղեցւոյս որ հայի ի հերսիս կոյս ի մէջ փոքր եկեղեցւոյս, և հինգ ի միւսոյ կողմանէ ի հարաւա կոյս և ուղակի ի վերուստ ի վերայ իւրացանչիւրոց լուսամտից մի մի եւս լուսամուտ փոքր եւ երկու երկու լուսամուտ եւս յերկուց կողմանց զրան տաճարին, որ հայի ի գափիմ սուլք եկեղեցւոյն: Եւ ի գալթին, որ է լայնութեամբ հինգ կանգնոյ և յորոյ վերայ վերնատուն կանանց չորից լուսամտօց լուսամուտ մի, որ հայի ի հերսիս. և երկու լուսամուտ եւս որ հայի զէպ ի յարեւմուտ՝ մի մի յերկուց կողմանց երկորորդ զրան սրոյ եկեղեցւոյ:

Եւ երկու զուռն զէպ առ միմեանս, որոց մին ելանէ առ փոքր եկեղեցին և միւսն ի յաւանդատուն. որ ի կողմն հարաւայ միաշափ և միատեսիլ ի քարանց մարմարիու-

նեայ յօրինեալ՝ վայելուշ զրուազօց, որպէս և դուռը տաճարին բայց առ առաւել բազմածախ առաւել վայելչաղիր և կարի գեղեցկատիս համակի մարմարի ի նեայ յազնիք բարանց կանգնեալ է հարկաւոր պատկերօց փորագրեալ, իսկ փոքր եկեղեցին, լայնութեամբն է ի վեցից և կիսոյ կանգնոյ, և երկայնութեամբ ի ժիշ կանգնոյ, գուով բարձրութեամբն ի յեօթն կանգնոյ զարդարեալ լուսամտօց հնգիւը, և խորանոց գեղեցկօց, որոյ և յատակն ի մարմարի ի նեայ յօրինեալ բարանց առ որումն է աւազանն սուրբ ի յընամիր բարանց մարմարի ի նեայ կերտեալ և վայելչացեալ, վարինքս այսորիկ մարմարի ի նեայ ազնիւը, ամենեցեան բերեալ եղեն ի կոստանդնուպոլոսյ թէ զրան տաճարին, և թէ երկուց դրանցն զոր յիշեցաք, և թէ սուրբ աւազանին, նաեւ երկաթեղէն զրունք և փեղկը և վանդակը լուսամտից և պէնձեղէն զուռն տաճարին, Ալոք՝ որբ ի ժամանակիս գտանեցան իշխանէն են այտորիկ, Մանուկ աղա, Դաւիթ աղա և Մերձան աղա, Մահստիք կարապետ աղա, Մեսրոպ աղա, Աւետիս աղա, և Հինացի Մանուկ աղա, որբ եղեն աշխատ ի շինման սրբյ եկեղեցոյս, թէ կպէս ոմն առաւել և ոմն նուազ, ըստ կարի և յաջողելոյ տեառն Աստոծոյ:

իսկ զերակացու հոգաբարձութեան հոգեւոր շինուածոյս եղեւ յիշեալ Դաւիթ աղան, հաւանութեամբ վերոգրեալ իշխանացոյ որ արթուն մտօց և անխոնչ աշխատանոց տարաւ ծանրութիւն գործոյս, սուրով և յօժարութեամբ յակըրանէ մինչ ցվախման, միայն երկնային վարձուց ակընկաւեալ:

Եւ թէ որպիսի կերպիւ արդինց եկեղեցոյս հաւաքեցաւ և պահպանել զգուշացան մինչեւ ի շինուած սրբոյն այսորիկ:

Յայտ է ամենեցուն՝ թէ ոչ են բանց մարդկան նոյնատեսակ և նոյնածեն, այլ ոմանց առաւել բերին ի հոգիւորս և ոմանց նուազ, ոմանց են հաւատարիմ ի համայն գործս, և ոմանց անձնասէր, և ի յօգուտս իւրեանց եւեկթ նային, վասն որյ համարիմք և յամենայն որ ոչ միաչափ ար-

դիւնաւորին հոգեւորին հոգեւոր երկրպագութիւն և պաշտօնց հարկաւորը, Արդ՝ իրաւունք սրբյ եկեղեցւոյս յառաջ ժամանական ոչ այնչափ ճշդիր իցէ պաշտօպանեալ, մինչ զի, եղեալ է որ գումար ինչ դրամոյ անցեալ ի ձեռն ոմանց՝ մսինցեալ է և հանեալ ի ստացուածոց եկեղեցւոյ նոյնպէս և մասն ինչ յայն եւս թակարդեալ մացեալ է, և ինցեանց զաւուրս իւրեանց լրացուցեալ յորոց և ի մինչ մի պակասեցի այցելութիւնն Աստոծոյ:

իսկ յորժամ հասիչ իցէ արդինք սրբոյ եկեղեցւոյս ի ձեռս հանգուցեալ արեւելցի Հայրապետ՝ մեծահարուստ աղային, սա զուով այր եռանդոտ և ի հոգեւորս ջերմիւ անդագոյն, ուրախացեալ ի սիրոս լինել անվանելի ախոյեան ամենայն ընդդիմութեանց ի հոգեւոր մասին առ ինցն ամփոփեալ է զարդիւնս սրբոյ եկեղեցւոյ, և օր ըստ օրէ յաւելեալ ի վերայ ի խորս պահեստի ամրացուցեալ յամենից վնասակար պարագայից, ընդդիմ կալով և արտաքին և ընտանի թշնամեաց բանիւ և զործով, մինչեւ յայն աստիճան, զի եթէ սոյն այրս երանութեան արժանի ոչ իցէ լեալ պաշտապան և հոգուով չափ խնամեածու արքեանց եկեղեցւոյս, ի վաղոց անոի բոլոր զումար դրամոց լեալ էր անհետ և մացեալ եկեղեցին ազաս յամենայն զոյից իւրոց և հնեսեարար ոչ էր յառաջ եկեալ այս զեղեցիկ շինութիւն եկեղեցւոյս Ազա սմատալի է զմեծ մասն պատճառութեան, սմա առաւելն ընծայելի է լիսրեարան զովութիւն, և մազթան առ Աստուած զի հանգուցէ հոգին յարբայութեան իւրում ընդ երանելի սուրբ իշխան:

Եւ ապա մինչ հասանէ ի կամաց տեառն վահճան իւր բարի, կոչէ առ ինցն զաւագ զորդի իւր ըզբարեսէր թաղէսու աղայ, և իրբու զաւանդ աստի զրամինն Աստոծոյ զզրամս եկեղեցւոյն յանձնէ սմա, որպէս ինչն արար և զգուշացաւ եկեղեցւոյ արդեանց, նոյնապէս ամենայն ընդդիմացողաց՝ կամեցողաց իւրացուցանել զինչ եկեղեցւոյ, կալ ընդդիմ և տալ համարձակ զաւատիսանի, թէ որ ձգէ զըար ի վեր, և վե-

բայ զիւոյ իւրոյ անկանի, և որ միտ զձնոս իւր յինչ՝ Աստուծոյ յատկացեալ, ճգէ Աստուծ ի վերայ նորա զձնոս իւր հատուցանել արդարութեամբ։

Աւստի այս եւս բարեսէր թադէսոս աղան ըստ պատուիրի ծնողին իւրոյ, և ընութեամբ եւս ունելով զայն բարեպաշառւթին և հաւատարմութիւն ամենայն զգուշութեամբ պաշտպան լինի արդեանց եկեղեցոյն օր ըստ օրէ բազմացուցեալ՝ հասուցանէ ի կատար եօթանասուն և չըս հազար եօթին հարիւր յիսուն և վեց մառչիլ զրոս և ապա պատճառու իւրէ յանձն անէ եղրօր իւրոյ հոգեսէլ Մանուկ աղային՝ զգանձ եկեղեցոյ, զիտութեամբ հարկաւոր եղելոց, և ինքն ընտանեօթ իւրովց զնայ յլինդրիանուալում բազար, և անդ բնակեալ ամս ինչ վճարէ զգեանս իւր ի կամ Աստուծոյ զորոյ զնողին տէր հանգուցէ յարբայութեան իւրում ընդ սուրբ իշխանս։

Խոկ ի մանէ անցեալ գումար դրամոյս առ Մանուկ բարեսէր աղան որ ներկայ իշխանապետն է բազարիս, լինի առաւել եւս ինամարդկեալ, զի սուրբ եկեղեցոյս զոլով հոգարարձու՝ նաեւ ըստ հոգեւոր մասին և լեալ փոխանորդ վերատեսչութեան բազարիս և զամենայն ինչ բարեպէս անօրինեալ օր բան զօր յաւելոյր յարդինս սուրբ եկեղեցոյս, և զնոյնս անարատ և անխախտելի պահէր յամենայն վնասակար հողմոց՝ նախադաս առնելով ամենայն առից և արից իւրոց՝ զիս հոգեւոր և իրեւ՝ զթիւթեական? անվնաս լինել՝ զգուշանայր դարման տանելով, և բանայր ըզլուծ ամենայն հոգեւոր իրականութեանց, մինչեւ հասուցանել նմա զիրաւունս տաճարին Աստուծոյ ի չափ հարիւր ըստ հազար մառչիլ։

Զորս ապա ի ծագել արեգական իմանալ ի ճառապայթից Աստուծաջին ողորժութեան հրամանաւ շինման սրբոյ եկեղեցոյս, յայսնի և լու ի լու ամենեցուն ծանուցեալ զորցանութիւն զրամոց հասանելոց մինչեւ ցկէտ շինմանս, և զամենեսեան վկայ ճշմարտութեան կացուցեալ առ զրան-

սրբոյ եկեղեցոյ յանձնեալ է ի ծեռա վերոիշեալ իշխանաց առնուլ ի ծախս պիտոյից սրբոյ եկեղեցոյ ի շնութեանս այսորիկ, Արով և ապա կառուցեալ սրբութեամբ նորութեամբ, ընդ նմին վայիլուչ Առաջնորդարանին և Դիպրատան՝ եղող ի նմա ներկայ վարժիչ Անդրիանուալուսեցոյ Տիրեայ Ստեֆանեան հանճարամիտ տիրացու Պետրոսին կայ մնայ յիշատակ մշտեն ջննաւոր, զբանյոս վերակացու իշխանապետին և հոգարարձու իշխանիս և իւրաքանչիւր իշխանաց և համայն ժողովրդոց մանկանց եկեղեցոյ՝ առ յապա եկեղոց եղրարց սիրելեաց ի վայելութե հոգեւոր և անպատճեմ ուրախութեան ի ներբին և արտաքին աշաց տեսութիւն։

Զոր և ուրախ կՄանուկ իշխանապետ աղայու և զորիս իւր՝ տիրապարգես, զիրիգոր և զթովակիմ Չելեպիխն բազարում խաղաղութեամբ անվիաս պահեսցէ յամենայն վնասակար դիպուածոց, և առատացուցէ զամենայն ինչս իւրեանց առաւել քառաւել մինչեւ յյալիւեան ։ Նոյն պէս զիավիթ աղայն զնոգարարձու շնութեանս այսորիկ տանն Աստուծոյ ինամենացէ Տէր ըստ իւրում ողորժութեան հանզերձ առտուածային զաւակօք իւրովք և վարձահատոց լիցի ի կրկին կեանս՝ պահելով յամենայն հոգեւոր և ի մարմաւոր վնասուց և զարդարելով ընդ երկայն աւուրս յամենայն բարութիւնս իւր։

Նաեւ կՄահտեսի կարապետ աղայն, զՄիրինան աղայն, զՄեսրոպ աղայն, և զԱւետիս աղայն, ընդ մերձաւոր պարագայս իւրեանց ի շնորհս ողորժութեան իւրոյ պահեսցէ տէր, և զարդարեսցէ զանազան բարութեամբ հոգեւոր և մարմաւոր վայելչութեամբ՝ ընդ որս և զմանկունս սրբոյ եկեղեցոյս՝ զիամենյն բարեսէր ժողովուրզ, ըստ ամենայն չափու և հասակի ամենազօր աշովի իւրով ինամենացէ և պահպանեսցէ Տէր, և ամենայն բարութեան հոփացուցէ ընդ երկայն աւուրս և զամենայն ի վախճանի սուրբ արդարյութեան իւրում արժանացուցէ։ Զի սոր

ամենքեխան ըստ իւրաքանչիւր աստիճանի և արդեանց և աշխատանց և ջերմեռանդ բաղդանաց՝ արժանի են յիշատակի և մաղթանաց առ պա Աստուած, զի ըստ վարձուց իւրիանց արժանի իցին երանական մասին՝ աստ յարեպէս բաղաքավարեալ, ըստ որում յաւուրս սոցա եղեւ շինութիւն տան Աստուածոյ և սորա եղեն աշխատ ըստ իւրաքանչիւր պայմանի և կարողութեան։ Որոյ վասն ապա խնդրեսուց ի Տեառնէն, զի տացէ սրբոյ եկեղեցւոյ հաստատութիւն անդրդուելի յամենայն վաստոց ըստ հոգեւորի և ըստ մարմաւորին Աստուածային աջովն պաշտպանեալ մինչեւ ի կատարում աշխարհի, որ և ասացն ամենայն հրեշտակը և մարդիկ եղիցի, եղիցի։

Հուսկ ուրեմն արժանի տեսջիբ յիշման ի բարի զԱմերոպ եկիմկոպոս զնուաստ հոգի, և ըզներողութեամբն Աստուածոյ առաջնորդ և վերատեսուչ բաղարիս, որ ներկայ զտեալ նորոգութեան սրբոյ եկեղեցւոյ՝ զծազրեցի զշամառօս ծանօթութիւնս, խնդրեմ որ գալափարէ զսա, և ըզփոքը յիշատակի զրեսցէ, և որ արասցէ, զվարծ ի Տեառնէ ընկալցի։

Ի ՌՄՀՀէ, և ի Սեպտեմբերի իւշ, ի Փիւմպուզօլիս բաղաց։

Սոյն եկեղեցւոյ բազմամեայ երախտաւոր՝ Զարարիա մարքարոն վարդապետն մեր ի շինան սրբոյ եկեղեցւոյ վերակռչեան Տէր առ ինքն ի սեպտեմբերի իտի, և ի թուին Հայոց ՌՄՀՀէ-1828 յաւուրտօնի սրբոյն Դէորպայ բաջայաղթ զօրավարին Վրիստոսի Տեառն մերոյ, որ և եղաւ առ զրան տաճարիս սրբոյ եկեղեցւոյ ի դիր հանգստեան արժանաւոր իւրոյ հողեջան երախտաւորացն, զոր Տէր ընդ սուրբս ի մէջ մի վերջապցի, ամէն։

Խսկ արդ վերսուին առ օրինակել սոյն սա ի նոյն օրինակէ անտի, ի յամենախոռնարհ և նուաստազունեղ մարզչէ տեղոյս, Պետրոս անուն և դպրէս Անդրիանու պօլսեցի, յորդոյ վաճառական Տերեայ Ստեփանի հայուցիւր ի տէր։

Բամի տեառն 1828, և նոյեմբերի 7 ի

սոյն Փիւմպուզօլիս բարեհամբաւ քաղաքիս ։

Այս հրատարակութեանս անմիջապէս կ'ուզեմ կցել նեակ հետեւեալ արձանացրութիւնները հաւաքրուած եկեղեցւոյն և շրջաբակի շինութեանց վրայէն։

Եկեղեցւոյն մայր դրան նակատը

Հզօր մեծանուն պահեա զսա հաստատուն

Ամենառատ ողորմութեամբ ամենակարողին Աստուածոյ հիմանէ նորոգ կառուցցաւ Ա. Եկեղեցին, որ յանուն սրբոյն Դէորպայ բաջամարտիկ զօրավարին ըրիստոսի։

Ի Պատիրագութեան կ. Պոլսոյ Տռ. Ձռ. Կարապէտ Աստուածաբեալ և սրբազն Արքեպիսկոպոսին։

Եւ յԱռաջնորդութիւն բաղացիս Տռն. Մեսրով Արքեպիսկոպոսին յորմէ զօծումն ընկալաւ։

Ներկայութեան աշխատաւորաց Զաքարիա Վարդապետին և տէր Պետրոսին։

Արքեամբ և ջանիւր իշխանապետաց և իշխանաց և բոլոր օրհնեալ ժողովրդոց մանկանց սրբոյ եկեղեցւոյ։

Պաշտպանութեամբ իրաւանց հանգուցեալ Հայրապետ Չորպաճույն, յես որոյ Մանուկ իշխանապետ աղային ընկ որդուց նորին՝ Պարոն Գրիգորին, յորմէ և յանձնեալ ի պէտա շինութեան սրբոյ եկեղեցւոյ փառաւորելոյ և վերակացուաց ամիրայից Մահուսի կարապէտ աղային, Մերոպ աղային, Աւետիս աղային, և Հինացի Մանուկ աղային յամի տեառն 1828 և հայոց թուականին ՌՄՀՀէ։

Եկեղեցւոյն ներքին դըսն արտաքին հակառակ վրայ

Ի Պատիրագութեան կոստանդնուպոլսոյ Տռ. Կարապէտ եռաշնորհ Արքեպիսկոպոսին յամի Տռ. 1828 և Հայոց ՌՄՀՀէ սկզբնապատճառ ստացման եկեղեցւոյն ազգին մերոյ մեծագործ և բազմերախտ Ապրո Զեւէպին ի 1675 յամի Փրկչին և Հայոց ՌՄՀՀէ։

Խսկ այժմ հիմանց նորոգութեամբ մե-

ծաղիք կառուցման պատճառ և կարեօց Հոգարածուն համայն շինութեան սր. տեղ-
ւոյս Ադրբամանցի Աստուածասէք Դաւիթ
աղային Սալիխազունեաց Որ զայս դրւուն
էր կանգնել իւրով արդեամբ ի յիշատակ
ծնողաց Սարգսի և Եւփրէսինեայ, և կե-
նակցոյն Մարիամայ և զաւակացն Սարգսի,
Մարտիրոսի, Յակովրայ և Եւփրէսինեայ:

Կիներու պահարանին Երկրորդ դրան վրայ
Վասն շինութեան սուրբ եկեղեցոյս
Թաղէսոի և Բարդողիմէսոսի սրբազն Ա-
ռարելոց եսուն առ առ Խմտատիէ Միքի-
ճան, Քեարոս, Պօղոս աղայցն առ յիշա-
տակ հանգուցելոց իւրեանց Թաղէսու, Թագ-
ուոր, Հայրապետ, Ճանիկ և միւս Թագուոր
և Պօղոս աղայց յիշել աղայցն:

Ցամի Տն. 1828 որ օձաւ զեկու. 9

Իսկ տաճարին գլխաւոր գաւիթին աջ
կողմը կը գտնուի գեղեցիկ անեղծ և մա-
քուր գրավ Զաքուրիա վարդապետին դամ-
բանը որուն արձանագրութիւնը այս է

ՊԱՐՈՒԱՆ Է ՁԱՐԱՐԱ
ՄԱԳՆԱՐԵՍ ՇԱՌՈՒԱՆՈՅՆ

Հակող արթուն նէր բարունեաց
Մըսակ ընտիր բանաւորաց
Խրստակրօն ժուժկալութեամբ
Ազօթական առ տէր փառաց
Պըսակ կրկին քեզ պատկան
Անաց լուսով լուսաւորեալ
կենաց բանին քարոզութեամբ
Մակրս գորոյդ կուսազրգեալ
Հանգեաւ ի տառապանաց կնաց զայս յամի
Տան. 1828 և ի Սեպ. 28 և հայ ԲՄՀՀ:

Մանկապարտէզին շէնքին ճակատը

Վարժարան Ա. Վարժարան 1894 և
Հայոց ՌՅԹի:

Եկեղեցւոյն բակի ջրամբարին պատին
վրայ մարմարին ծուածել

Անմահ սիրոյ ի յիշատակ մօր քում
միակ սիրուն որդեակ ես ջրշեղչա այս
Յարութիւն աղա կտիրօֆ վասն հոգւոյ
սիրելի որդոյ իւրոյ Միքրանայ հանգու-
ցեալ ի տէր 1874 Մայիս 5.ի Զմիւրնիա

ցաղարի ի հասակի 17 ամաց. Փէլիպպու-
պօլիս 1877 մայիս:

Այսքան բաւ կը համարիմ այս ան-
գամ իրը հում նիւթ Ս. Գէորգ եկեղեցւոյն
1828 թուկն վերաշինութեան պատմու-
թեան համար:

8. ԳԻՒՐՏԱՆԱ

ՀԱՅ ՀԻՆ ՆՇՄԱՐՆԵՐ

ԲԱՏՈՒԱՅԻ ՄԱՏՈՒԱՅԻ ՄԵԶ

ՀՀՀՀ

Բատուայի Առաջնորդարանի Պարբերա-
թերթին (Bollettino Diocesano di Pa-
dova) անցեալ տարոյ թիւին մէջ, Z. Riz-
zierի յօդուածի մը մէջ ուսումնասիրած է
Արեւելքն Բատուա եկող և հաստատուող
կրօնաւորներու պատմութիւնը, իր տեղեկու-
թիւնները քաղելով քաղքին Եպիսկոպո-
սարանի դիւնաներէն, Շահնեկան է մեզի
համար տեսնելը թէ ինչպէս հայ կրօնա-
ւորներ ժի՞ զարէն սկսեալ կը յիշատա-
կուին և արդէն նուաղելու վիճակի մէջ,
ի Բատուա, ինչ որ ցոյց կու տայ նախա-
պէս բաւական ծաղկեալ վիճակի մը զո-
յութիւնը. իր կարեւորութեան համար այդ
ցիրուցան վաւերաթուղթերէ հաւատուած
տեղեկութիւնները կը փափագինց մեր ըն-
թերցողներուն ալ ներկայացնել այս էջե-
րուն մէջ:

Ցատ քիչ ծանօթ է մեզի Բարսեղեան
կրօնաւորներու Միքրանութիւնը որու միա-
րանները ուղղակի Հայաստանէն զալով
հաստատուեցան Բատուայի մէջ և զարէ
մ'աւելի հոն մացին:

Ընդհանուր կերպով իտալիոյ համար չէ
այս նորութիւնը, որքան Հիւսիսային ի-
տալիոյ համար, ուր՝ բաց ի ձենովայէն,
առ այժմ չենց զիտեր թէ ուրիշ ուր կեցած
ըլլաւ: Ըսինց ոչ բոլոր իտալիոյ համար,
քանի որ զիտենց արդէն թէ այդ կրօնա-
ւորները Հարաւային իտալիոյ մէջ երկար-
ութիւն բնակութիւն ունեցեր են, մասնա-
ւորապէս (Le Puglie) Բուլիէի մէջ, ուր
մինչև ցարդ «իտալական թէրայիտի» (Te-